## ՄԵԾԱՆՈՒՆ ՆՆՋԵՑԵԱԼՔ

Գերապ. Լանտրիոց, Արքեպիսկոպոս Ուէյմսի. բազմաբեղուն եկեղեցական մատենագիր։

Կոմս Կարոլոս Լէոնի, պատուացի նշանաւոր մատենագիր, և անուանի ստեղծիչ վիպասանութեանց։

Տոռոնոց-Տիւրբեռէ, գաղղիացի աշխարհաշրջիկ ճանապարհորդ։

Յովսէփ Լէռի, եբրայեցի նշանաւոր գրագէտ։

Գերապ. Մէռոց, պելճիգացի Արքեպիսկոպոս և պաշտօնեայ Սրբազան Քահանայապետին 'ի Հռովմ։

Էռնեստ Սէռէ, գաղղիացի համբաւաւոր վիպասան։

Պռուք, աստուածաբան և ուղղիչ Համալսարանին Օգսպուրկի։

Անտոն Զիբոլլա, հռովմայեցի անուանի շինուածապետ։

Ա. Ս. Ֆիրքովիչ, արևելագէտ, մեռեալ 'ի Ղրիմ'ի հասակի 98 ամաց։

Ա. Լ. Ա. Ֆէ, գաղղիացի անուանի բնագէտին, մեռեալ 'ի հասակի 85 ամաց։

Ֆ. Ա. Մէյսնէր, զուիցերացի բուսաբան։

Ա. Ֆ. Ռիոց, երևելի քննադատ գաղղիական գեղարուեստին, հեղինակ գրուածոյն Քրիստոնէական գեղարուեստ և Լէոնարտոյ տա Վինչի։

Յովսէփ Սոնէի, լոմբարտացի նշանաւոր պատկերահան, մեռեալ 'ի խոր ծերութեան։

Փրանչիսկոս Պոնացինի, լիվոռնոցի անուանի պատմաբան։

Էլի տը Պոմոն, գաղղիացի հռչակաւոր երկրաբան, քարտուղար ճեմարանին գիտութեանց Բարիզու։

Կայետանոս Ճիոռճինի, լուգգացի արգոյ իրաւաբան և քաղաքագէտ։

Ստեփանոս Կոլէսգորի, ռումէն նշանաւոր քաղաքագէտ։

Փրանչիսկոս Կիզոց, գաղղիացի բազմահռչակ պատմաբան և քաղաքագէտ։

Յովսէփ Սիրդորի, միլանցի նշանաւոր զօրավար և երեսփոխան խորհրդարանին Իտալիոյ։

Բասքուալէ Դոլա, սարդենիացի անուանի իրաւագէտ և պատմաբան։

Գերապ. Կ. Լիմպէրդի, Արքեպիսկոպոս Փլորենտիոյ։

Օտէսգալգի Անտոն, լոմբարտացի գրագէտ։

Եմիլիոս Սէճոիռ, գաղղիացի արդիւնաւոր ստեղծիչ կատակերգութեանց։

Հ. Աւգոստոս Թայնէր, գերմանացի բազմահմուտ պատմաբան և վերակացու վատիկանեան դիւանաց։

Յովսէփ Պալսամոյ Գռիվէլլի, լոմբարտացի նշանաւոր բնագէտին, դասատու համալսարանին Բաւիոյ։

Լուդովիկոս Տէզամպրուա, նախագահ ծերակուտին Իտալիոյ։

Մարիանոս Ֆորդունի, սպանիացի երևելի պատկերահան. մեռեալ 'ի Հռովմ'ի հասակի 36 ամաց։

Ուիլլիէմ Ճառտին, անգղիացի համբաւաւոր բնագէտին։

Փիլիպպոս Մէլլիմնա, նուիրակ խորհրդարանին Իտալիոյ։

Էմէ Ռոտիէռ, գաղղիացի նշանաւոր իրաւագէտ, դասատու 'ի Դուլուզ։

Սալվադորէ Վիկոյ, սիկիլիացի անտեսաբան, քաղաքագէտ և հայրենասէր, մեռեալ 'ի հասակի 90 ամաց։

digitised by A.R.A.R.@